Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
դեկտեմբերի 27-ի N 1671 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԹԻԿՆԱՊԱՀԻ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ

1. Թիկնապահի և պահնորդի որակավորման ստուգման (այսուհետ՝ որակավորման ստուգում) կարգով կարգավորվում են թեկնածուի՝ թիկնապահի և պահնորդի գործառույթ իրականացնելու համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ստուգման հետ կապված հարաբերությունները:

2. Որակավորումն ստուգում է թիկնապահի և պահնորդի որակավորման ստուգման հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով):

3. Հանձնաժողովի կազմավորման կարգը և կանոնադրությունը հաստատվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության (այսուհետ՝ ոստիկանություն) պետի հրամանով:

4. Որակավորման ստուգմանը մասնակցելու համար թեկնածուն ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում, որտեղ պետք է նշվեն՝

ա. դիմորդի անունը, ազգանունը և հայրանունը (անձը հաստատող փաստաթղթում հայրանվան առկայության դեպքում),

բ. դիմորդի բնակության վայրը, հեռախոսահամարը, ֆաքսի համարը կամ էլեկտրոնային փոստի հասցեն (դրանց առկայության դեպքում),

գ. սույն կարգի 5-րդ կետով նախատեսված՝ հանձնաժողովի կողմից կատարվող հարցումներին անձի համաձայնությունը.

2) անձնագիրը և դրա պատճենը.

3) համապատասխան մասնագիտական կրթության վերաբերյալ ավարտական փաստաթուղթ՝ դիպլոմ կամ մասնագիտական պատրաստվածության, վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներ ավարտած լինելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ (վկայական, հավաստագիր և այլն).

4) պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից օրենքով սահմանված կարգով ազատված լինելու կամ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից օրենքով սահմանված կարգով տարկետում ստանալու վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր.

5) 2 գունավոր լուսանկար՝ 3 x 4 չափսի:

5. Թեկնածուի կողմից դիտավորյալ հանցագործություն կատարված լինելու կամ դիտավորյալ հանցագործության համար դատվածության՝ սահմանված կարգով հանված կամ մարված լինելու, ինչպես նաև՝ համապատասխան բուժհիմնարկներում հոգեկան հիվանդության, հարբեցողության կամ թմրամոլության պատճառով հաշվառված չլինելու հանգամանքները պարզում է հանձնաժողովը՝ համապատասխան հարցումներ կատարելու միջոցով:

6. Որակավորման ստուգմանը մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու ժամկետների վերաբերյալ որակավորման ստուգումից առնվազն մեկ ամիս առաջ ոստիկանության http://www. police.am ինտերնետային կայքում, «02» շաբաթաթերթում և http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տրվում է իրազեկում:

7. Թեկնածուն որակավորման ստուգման անցկացման օրվա, ժամի և տեղի վերաբերյալ պատշաճ կերպով ծանուցվում է որակավորման ստուգումից առնվազն յոթ օր առաջ: Ծանուցումը տրվում է գրավոր՝ ըստ թեկնածուի նշած հասցեի, իսկ նրա ցանկությամբ՝ նաև հեռախոսով, էլեկտրոնային փոստով:

8. Որակավորման ստուգումն անցկացվում է հայերենով:

9. Որակավորման ստուգմանը կարող են ներկա գտնվել մասնավոր պահնորդական գործունեություն և համապատասխան մասնագիտական ուսուցում իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչները:

10. Որակավորումն ստուգվում է թիկնապահի կամ պահնորդի մասնագիտական ուսուցման համար անհրաժեշտ պետական կրթական չափորոշիչներով սահմանված առարկաների և կրթական մոդուլների շրջանակներում:

11. Որակավորման ստուգման հարցաշարերը և քննական հարցատոմսերն ըստ թիկնապահի և պահնորդի մասնագիտությունների՝ կազմում է հանձնաժողովը:

12. Ըստ թիկնապահի և պահնորդի մասնագիտությունների՝ յուրաքանչյուր հարցաշար ներառում է առավելագույնը հարյուր հարց, որոնք ստուգման օրվանից ոչ ուշ, քան վեց ամիս առաջ պարտադիր հրապարակվում են http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

13. Որակավորումն ստուգվում է քննական հարցատոմսերի միջոցով՝ մասնագիտական ուսուցման ընթացքում ստացած տեսական գիտելիքների և գործնական առաջադրանքներ լուծելու հմտությունների ստուգման եղանակով:

14. Յուրաքանչյուր քննական հարցատոմս ներառում է երկու տեսական հարց և մեկ գործնական առաջադրանք:

15. Որակավորման ստուգմանը նախապատրաստվելու համար թեկնածուին տրամադրվում է 30 րոպե ժամանակ:

16. Թեկնածուի տեսական գիտելիքները և գործնական հմտությունները հանձնաժողովի անդամների կողմից գնահատվում են առանձին դրական կամ բացասական գնահատականներով, որոնց միջին թվաբանական հաշվարկով դրվում է վերջնական դրական կամ բացասական գնահատական:

17. Հանձնաժողովը թեկնածուների գնահատականները հրապարակում է որակավորման ստուգման օրվա արդյունքները նույն օրն ամփոփելուց հետո մեկ ժամվա ընթացքում:

18. Թեկնածուն որակավորման ստուգման արդյունքները կարող է գրավոր բողոքարկել հանձնաժողովին՝ ոչ ուշ, քան արդյունքները հայտարարվելուց հետո մեկ ժամվա ընթացքում: Բողոքարկման վերաբերյալ պատասխանը տրվում է նույն օրը:

19. Որակավորման ստուգման արդյունքները կարող են բողոքարկվել դատական կարգով:

20. Որակավորման ստուգումից բացասական գնահատական ստացած թեկնածուն կարող է հաջորդ որակավորման ստուգմանը մասնակցել վերջին անգամ որակավորման ստուգմանը մասնակցելու օրվանից ոչ շուտ, քան երկու ամիս հետո:

21. Հանձնաժողովը որակավորման ստուգման դրական գնահատականների հիման վրա ընդունում է որոշում թեկնածուներին որակավորման ստուգման վկայականներ տալու մասին: Վկայականը տրվում է 10 աշխատանքային օրվա ընթացքում:

22. Որակավորման ստուգման վկայականի ձևը՝ ըստ թիկնապահի և պահնորդի որակավորումների, սահմանվում է ոստիկանության պետի հրամանով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ